ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2023թ. թիվ 696-Ա

Վ.ՃՈՒՂՈՒՐՅԱՆԻՆ «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ
ԱԼ.ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 7 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»
ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» թիվ 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2023 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 647-Ա որոշումը և հաշվի առնելով Վ.Ճուղուրյանի դիմումը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Վարդուհի Աղասիի Ճուղուրյանին նշանակել «ՀՀ Լոռու մարզի Ալավերդու Ալ.Մյասնիկյանի անվան թիվ 7 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ մինչև օրենքով սահմանված կարգով մրցույթի արդյունքում նոր տնօրենի ընտրությունը և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր:
2. Վ.Ճուղուրյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի նոյեմբերի 16-ից:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

15/11/23

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թ. նոյեմբերի 15
ք.Վանաձոր